Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գ. Գույանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը***
   Լիանա Մելքոնյան
   Սևակ Դավթյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***
   Ջրային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
   Ջրային ռեսուրսների կառավարման վարչության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***
   Այցելություն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շիհեցզի, Ուրումչի քաղաքներ, 2023թվականի մայիսի 28-ից մինչև 2023 թվականի հունիսի 20-ը

4. ***Հրավիրող կողմը***
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարություն

5. ***Գործուղման նպատակը***
   Մասնակցություն «Հայաստանի ոռոգման ջրամատակարարման համակարգի զարգացմանը նվիրված սեմինար» թեմայով դասընթացին

6. ***Քննարկված թեմաները***

2023 թվականի մայիսի 28-ից մինչև 2023 թվականի հունիսի 20-ը կայացած «Հայաստանի ոռոգման ջրամատակարարման համակարգի զարգացմանը նվիրված սեմինար» թեմայով դասընթացի շրջանակներում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Ոռոգման համակարգերի ջրախնայող տեխնոլոգիաներ,
- Ընդհանուր ակնարկ Չինաստանի տնտեսության վերաբերյալ, անցում ջրախնայող համակարգերի, վերջին 30 տարիների համեմատական վերլուծություն,
- Չորային տարածքներում ջրամբարների խմբերի արդյունավետ պլանավորում (Սինցզյան նահանգի Մանաս գետի ավազանում գտնվող ջրամբարների խումբը),
- Չինաստանի գյուղատնտեսության զարգացման ընդհանուր դրույթներ,
- Չորային տարածքներում ջրի օգտագործման և բաշխման արդյունավետ տեխնոլոգիաներ,
- Խաղողի այգիների ոռոգման տեխնոլոգիան, ոռոգման ջրի խնայող նոր տեխնոլոգիաների կիրառումը,
- Օազիսների աշխարհագրություն և գյուղատնտեսություն,
- Ջրային տնտեսության օբյեկտների կառավարում և տեխնիկական սպասարկում,
- Ոռոգման ջրախնայող համակարգերում առկա հիդրավլիկ խնդիրները,
- Ոռոգման համակարգերի և բարձրորակ գյուղատնտեսական հողերի համատեղ կառավարում, նորարարական տեխնոլոգիաների զարգացում և ժամանակակից ոռոգման համակարգերի կառուցում,
- Ոռոգման ազդեցությունը տարածաշրջանային կլիմայի վրա, գյուղատնտեսական մշակաբույսերի ջերմային սթրես,
- Ժամանակակից գյուղատնտեսական ոռոգման համակարգերի կառավարում և արդի տեխնոլոգիաների կիրառում:

7. ***<u>Հանդիպումները, ելույթները.</u>***
    - Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում գտնվելու ընթացքում հայաստանյան պատվիրակությունն այցելեց Շիհեցզի քաղաքի համալսարանի ժամանակակից ոռոգման համակարգերի նախագծման ինստիտուտ, ծանոթացավ նորարական տեխնոլոգիաներին, դրանց կիրառման մեխանիզմներին,

- Շիհեցզի համալսարանի ուսանողական փառատոնի բացման արարողության մասնակցություն, ծանոթացում չինական մշակույթի հետ,
- Այցելություն Կենտրոնական ջրամբար, ջրամբարի հիդրոտեխնիկական կառույցների վերաբերյալ տեղեկատվության ստացում,
- Այցելություն Շիհեցզի քաղաքի գյուղատնտեսության թանգարան,
- Այցելություն Ուրումչի քաղաքի բարձր տեխնոլոգիաների ընկերություն,
- Այցելություն Ուրումչի քաղաքի գյուղատնտեսական ցուցադրական այգի, ծանոթացում նորագույն տեխնոլոգիաների ներդրման համակարգին,
- Այցելություն Շիհեցզի քաղաքի կաթիլային ոռոգման համակարգերի արտադրության գործարան,
- Այցելություն Սինցզյանի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիա

8. ***<u>Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>***

Քննարկումների, այցելությունների ընթացքում կարևորվեց ոլորտային համագործակցության արդյունավետությունը երկու երկրների միջև: Չինաստանի կողմից կարևոր նշանակություն տրվեց ՀՀ ջրամբարաշինությանը, ջրախնայող համակարգերի ներդրմանը, նմանատիպ ձևաչափով դասընթացների կազմակերպմանը՝ ուղղված երկկողմ համագործակցության հնարավորության ընձեռնմանն ու ընդլայնմանը:
Դասընթացի ավարտին ստորագրվեց հետագա համագործակցության հուշագիր՝ լիազորված անձանց կողմից ջրային համակարգերի մասով:

9. ***<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>***

Քննարկումների, բազմաթիվ այցելությունների ընթացքում ձեռք բերվեցին նոր գիտելիքներ ոռոգման, ջրախնայող համակարգերի վերաբերյալ՝ հիմնված Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղած դասերի և լավագույն փորձի վրա:
Դասընթացի ընթացքում հայաստանյան պատվիրակության կողմից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության մասին ընդհանուր ակնարկ, ինչպես նաև ներկայացվել են ջրային ոլորտում առկա խնդիրները և դրանց

լուծմանն ուղղված միջոցառումները, ձեռքբերումները, կարևորվել է նաև շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շարունակականությունը և նոր բազմաոլորտ համագործակցությունը:

Գործուղվողներ՝ Լ. Մելքոնյան

Ս. Դավեյան

23.06.2023թ"